

**Ուրբաթ, 21 Փետրուար.-** Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Անտոն Սալման այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

**Երկուշաբթի, 24 Փետրուար.-** Առաւօտեան ժամը 11-ին, Իսրայէլի մէջ Թուրքիոյ Հնդհանուր Հիւպատոս՝ Տիար Ահմետ Ռըզա Տեմիրըր այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

**Չորեքշաբթի, 26 Փետրուար.-** Երիքովի զինուորապետը ընկերակցութեամբ հնազիտութեան, բնապահպանութեան, չափազրման եւ քաղաքաշինութեան բաժիններու աշխատակիցներու այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան

Հօր հետ: Հանդիպման ընթացքին զինուորապետի ուշադրութեան յանձնուեցաւ Յորդանան գետի ափին կառուցուելիք հայկական եկեղեցւոյ յատակագիծը, որու հիման վրայ Պատրիարքութեանս պիտի տրամադրուի հողատարածք:

**Շաբաթ, 29 Փետրուար.-** Անգլիկան եկեղեցւոյ Երուսաղէմի եւ Միջին Արեւելքի թեմի նոր առաջնորդ՝ Հայր Հոսամ Նահումի ընտրուելուն առիթով տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ՝ Դիւանապետ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեանի:

**Երկուշաբթի, 2 Մարտ.-** Իսրայէլի մէջ Հայաստանի Արտակարգ եւ Լիազօր դեսպան՝ Տիար Արմէն Սմբատեան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

## ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՕՍՔ

Ժամանակը առիթ կու տայ մեզի դրամ շահելու, իսկ դրամը՝ ժամանակ վատնելու:

Ժամանակը սպաննելու հազար ձեւ կայ, բայց յարութիւն տալու ոչ մէկ միջոց:

Կեանքը մեծ վաճառատուն մըն է, ուր ամէն ինչ կը գտնես բացի փնտռածէդ:

Կը յաղթէ ան՝ ով չի դադրիր փորձելէ:

Ժամանակն աւելի կարեւոր է, քան դրամը: Կրնաս աւելի շատ դրամ ունենալ, սակայն ժամանակ՝ երբեք:

Համբերութիւնը դառն է, սակայն անոր պտուղները քաղցր են: